

## Թանգարանների, Պատկերասրահների, Բուսաբանական Այգիների, Կենդանաբանական Այգիների և Ակվարիումների Վերաբացման Արձանագրություն. Հավելված Մ

**Վերջին վերանայումներ.** (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)  
1/28/21.

- Թանգարանները, պատկերասրահները, կենդանաբանական այգիները և  
ակվարիումները կարող են վերաբացվել բացօթյա գործունեությունների համար՝  
համաձայն սույն արձանագրության:
- Աշխատակիցները պետք է կրեն դեմքի ծածկոցներ՝ անգամ եթե նրանք գտնվում են փակ  
խցիկներում: Ընդմիջումների սենյակներում պետք է տեղադրված լինեն զբաղվածության  
մասին սահմանափակումները և պետք է վերաձևավորվեն՝ աշխատակիցների միջև  
առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորությունը:

Լոս Անջելեսի Ծրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը իրականացնում է  
վերանայված նահանգային քաղաքականություն, որը պահանջում է փակել թանգարանների,  
պատկերասրահների, բուսաբանական այգիների, կենդանաբանական այգիների և  
ակվարիումների ներսի տարածքները հանրության համար մինչև հետագա ծանուցումը: Այս  
հաստատությունների բոլոր բացօթյա տարածքները կարող են շարունակել գործել՝ պայմանով,  
որ նրանք պետք է բավարարեն այս Ստուգաթերում նշված պայմաններին: **Թանգարանների,  
պատկերասրահների, կենդանաբանական այգիների և ակվարիումների բացօթյա  
տարածքներում զբաղվածությունը սահմանափակվում է 50%-ով:** Ստորև ներկայացված  
պահանջները վերաբերում են Թանգարաններին, Պատկերասրահներին, Բուսաբանական  
Այգիներին, Կենդանաբանական Այգիներին և Ակվարիումներին՝ համաձայն Առողջապահության  
Նահանգային Պատասխանատուի Հրամանի: Նահանգապետի կողմից այս հաստատությունների  
համար սահմանված պայմաններից բացի, այս տեսակի բիզնեսները պետք է նաև  
համապատասխանեն Թանգարանների, Պատկերասրահների, Բուսաբանական Այգիների,  
Կենդանաբանական Այգիների և Ակվարիումների համար նախատեսված սույն Ստուգաթերթում  
ներկայացված պայմաններին:

Այս ուղեցույցը նախատեսված չէ ժամանցային, զվարճանքի կամ ջրային այգիների համար: Այն  
թանգարանները, պատկերասրահները, բուսաբանական այգիները, կենդանաբանական  
այգիները և ակվարիումները, որոնցում գործում են ընտանեկան զվարճանքի կենտրոններ, այդ  
թվում՝ կինոթատրոններ, պետք է այդ տարածքները փակ պահվեն մինչև դրանց թույլ կտրվի  
գործել: Թանգարանները, որտեղ առկա են հավաքների համար նախատեսված տարածքներ,  
վարձակալությամբ տրվող հանդիպման սենյակներ, մասնավոր միջոցառումների համար այլ  
տարածքներ և այլն, պետք է այդ տարածքները փակ պահեն, մինչև թույլ կտրվի վերսկսել **հատուկ  
իրադարձությունների կամ** հավաքների՝ փոփոխված կամ ամբողջական ձևով՝ հատուկ  
վերաբացման հրամանով և ուղեցույցով: Դադարեցրեք այնպիսի ցուցադրություններն, ինչպիսիք  
են կենդանիների ցուցադրությունները, եթե չեն ապահովվում ֆիզիկական հեռավորության ու  
սանիտարական մաքրման արձանագրությունները: Բոլոր **հատուկ** միջոցառումները կամ  
հավաքները, ինչպիսիք են համերգները կամ մասնավոր խնջույքները/միջոցառումները, պետք է  
չեղյալ հայտարարվեն կամ հետաձգվեն:

- ❑ Մանրածախ առևտրի տարածքներ պարունակող թանգարանները, պատկերասրահները, բուսաբանական այգիները, կենդանաբանական այգիները և ակվարիումները պետք է համապատասխանեն հանրային առողջապահության՝ [մանրածախ առևտրի հաստատությունների արձանագրություններին](#):
- ❑ Թանգարաններում, պատկերասրահներում, բուսաբանական այգիներում, կենդանաբանական այգիներում և ակվարիումներում առկա ռեստորանները, սրճարաններն ու սննդի և խմիչքի վաճառքի կետերը պետք է համապատասխանեն հանրային առողջապահության՝ [ռեստորանների արձանագրություններին](#): Տեղում օգտագործելու նպատակով սննդի և խմիչքների վաճառքն արգելվում է:
- ❑ Թանգարանների, պատկերասրահների, բուսաբանական այգիների, կենդանաբանական այգիների և ակվարիումների ներսում առկա գրասենյակային տարածքները պետք է համապատասխանեն հանրային առողջապահության՝ [գրասենյակային աշխատավայրերի արձանագրություններին](#):

Հաջորդող արձանագրություններում <<ընտանիք>> եզրույթը սահմանվում է՝ որպես <<անձինք, որոնք ապրում են միասին՝ որպես մեկ ընտանիք>> և չպետք է ներառի կազմակերպական խմբերի կացության հաստատություններ՝ ինչպիսիք են հանրակացարանները, եղբայրական համայնքները, կանանց համայնքները, մենաստանները, կուսանոցները կամ բնակելի խնամքի հաստատությունները, ինչպես նաև չպետք է ներառի այնպիսի առևտրային կացության հաստատություններ՝ ինչպիսիք են օթևանները, հյուրանոցները և մոթելները: <sup>1</sup> <<Անձնակազմ>> և <<աշխատակից>> եզրույթները ներառում են աշխատակիցներին, կամավորներին, պրակտիկանտներին և փորձակներին (ստաժորներ), սովորողներին և մյուս անհատներին, որոնք աշխատանք են կատարում հաստատության տարածքում: <<Այցելուները>> կամ <<հաճախորդները>> պետք է ընկալվեն որպես հանրության անդամներ, կամ այլոք, որոնք անձնակազմի անդամներ կամ աշխատակիցներ չեն, որոնք ժամանակ են անցկացնում բիզնեսի կամ հաստատության տարածքում: <<Շենք>>, <<հաստատություն>> և <<շինություն>> եզրույթները վերաբերում են շինությանը, շենքին և ցանկացած հարակից շենքերին կամ շինություններին, որոնց տարածքում թույլատրվում է իրականացնել գործունեություն:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիությունից, ուստի պարբերաբար ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումների և համապատասխան ուղեցույցների համար:

<sup>1</sup> Los Angeles County Code, Title 22. §22.14.060 - F. Family definition. (Ord. 2019-0004 § 1, 2019.)  
[https://library.municode.com/ca/los\\_angeles\\_county/codes/code\\_of\\_ordinances?nodeId=TIT22PLZO\\_DIV2DE\\_CH22.14DE\\_22.14.060F](https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22.14DE_22.14.060F)

Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Աշխատավայրի կանոնադրությունն ու գործելակերպը աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Խիստ կարևոր ծառայությունների անաչառ հասանելիության միջոցառումներ

Եթե ձեր հաստատությունը մշակում է վերաբացման ցանկացած արձանագրություն, ապա անհրաժեշտ է անդրադարձնալ վերոհիշյալ հինգ հիմնական ոլորտներին:

**Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:**

Բիզնեսի անունը.

Հաստատության հասցեն.

Առավելագույն այցելուների քանակը՝ համաձայն Հրդեհային Օրենսգրքի.

Հանրության համար մոտավոր քառակուսի ոտնաչափ բաց տարածքը.

**A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂԴՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԻՅՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Յուրաքանչյուր աշխատող, ով կարող է իր պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է աշխատել տնից:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և քրոնիկ հիվանդություններ ունեցող) հնարավորության դեպքում հանձնարարել այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվել են՝ ընդլայնելու աշխատողների տնից աշխատելու հնարավորությունները: Դիտարկեք առաջարկությունների տարբերակներ այն աշխատողներին, դոցենտներին, պրակտիկանտներին և կամավոր աշխատակազմին, ովքեր հայցում են փոփոխված պարտականությունների հնարավորություններ, որ նվազագույնի են հասցնում հաճախորդների և այլ աշխատակիցների հետ նրանց շփումը (օրինակ՝ գույքագրման կառավարում գանձապահ աշխատելու փոխարեն կամ կառավարել վարչական կարիքներ

հեռահաղորդակցության միջոցով):

- ❑ Ներդրվել են այլընտրանքային, տատանվող կամ հերթափոխով ժամանակացույցերի կիրառում՝ ֆիզիկական հեռավորությունն առավելագույնի հասցնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին (այդ թվում՝ վճարվող անձնակազմը, դոցենտները, պրակտիկանտները և կամավորները, որ ընդհանրական ձևով կոչվում են «աշխատակիցներ») զգուշացվել է աշխատանքի չներկայանալ, եթե նրանք հիվանդ են կամ շփում են ունեցել COVID-19-ով վարակված որևէ անձի հետ: Աշխատողները հասկանում են, որ պետք է հետևեն Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցներին, եթե կիրառելի է: Աշխատանքից բացակայելու կանոնները վերանայվել և փոփոխվել են որպեսզի աշխատողները չտուժեն, եթե հիվանդության պատճառով տանն են մնացել:
  - Գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստները, որոնք աշխատակիցները կարող են իրավունք ունենալ ստանալու, ֆինանսապես հեշտացնում են տանը մնալը: Որոնել հավելյալ տեղեկություններ հիվանդության պատճառով բացակայությունների համար կառավարական օժանդակության [ծրագրերի](#) և COVID19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության պատճառով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների կողմից Գործնավիրուսի առաջին արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և Մարտի 19-ից Հուլիսի 5-ի միջակայքում COVID-19-ով վարակման դեպքերի ի հայտ գալուն առնչվող աշխատանքի հետ կապված կանխավարկածը՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր հրամանի](#) վերաբերյալ:
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ եթե նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ, ապա գործատուն պետք է իր գործող ծրագրի համապատասխան պահանջի որպեսզի «հիվանդ(ներ)ը [ինքնամեկուսանան տանը](#), ինչպես նաև պետք է պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են այդ «հիվանդի» հետ, անմիջապես [ինքնակարանտինի ենթարկվեն](#): Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն, որով կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցները թեստավորվեն կամ նրանց համար հասանելի լինի COVID-19-ի թեստավորումը, պարզելու համար թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որի հետևանքով հնարավոր է պահանջվեն COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Հետևել Հանրային Առողջապահության ուղեցույցին [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):
- ❑ Մուտքի ստուգումները իրականացվում են՝ նախքան աշխատակիցներին կթույլատրվի աշխատավայր մտնել՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության [Մուտքի Ստուգումների ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:

- ❑ Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակման դեպքեր բացահայտվելու դեպքում գործատուն պետք է զեկուցի այս խմբի վերաբերյալ Հանրային Առողջապահության Վարչությանը՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարով կամ առցանց՝ հետևյալ հասցեով՝ <http://www.redcap.link/covidreport>: Եթե աշխատավայրում վարակված խումբ հայտնաբերվի, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետազոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքնի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն դեմքի ծածկոցներ՝ բացառությամբ, երբ մենակ աշխատում են փակ դռներով անձնական սենյակներում, կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունն այն աշխատակիցների համար, որոնք աշխատում էին ամուր պատնեշներով խցիկներում, որոնց բարձրությունը գերազանցում էր աշխատակցի հասակը կազմած ժամանակ, այլևս չի գործում՝ մինչև հետագա ծանուցումը:
- ❑ Աշխատակիցներին հանձնարարվել է լվանալ կամ փոխել դիմակներն ամեն օր:
- ❑ Դիմակների պատշաճ և ճշգրիտ կիրառությունը ապահովելու համար աշխատակիցներին չպետք է խրախուսվի ուտել կամ խմել իրենց ընդմիջումների համար նախատեսված ժամերից բացի այլ ժամերի, երբ նրանք կարող են ապահով կերպով հեռացնել դիմակները և մյուսներից պահպանել ֆիզիկական հեռավորություն: Ուտելու և խմելու ամբողջ ընթացքում աշխատակիցները պետք է մյուսներից պահպանեն առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն: Նախընտրելի է ուտել և խմել բացօթյա տարածքներում և հեռու գտնվել մյուսներից: Խցիկներում կամ աշխատավայրում ուտելը և խմելը ավելի նախընտրելի է ընդմիջումների սենյակներում ուտելուց և խմելուց, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելն ապահովում է ավելի մեծ հեռավորություն մյուսներից և նախատեսում է պատնեշներ աշխատողների միջև:
- ❑ Զբաղվածությունը և աշխատակիցների միջև տարածությունը պետք է հասցվի առավելագույնի ցանկացած սենյակում կամ տարածքում, որոնք օգտագործվում են աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա կարելի է իրականացել հետևյալ տարբերակներով
  - Տեղադրել զբաղվածությունը սահմանող ցուցատախտակ, որը համապատասխանում է անձանց միջև սենյակներում կամ ընդմիջումների համար նախատեսված վայրերում առնվազն վեց ոտնաչափ թույլատրող հեռավորությանը, և
  - Դասակարգել ընդմիջումների և ճաշելու ժամերն այնպես, որ նվազեցվի զբաղվածությունը սենյակներում և ճաշելու և ընդմիջումների համար նախատեսված

տարածքներում, և

- Տեղադրել սեղանները առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ և ապահովել վեց ոտնաչափ տարածք նստատեղերի միջև՝ հեռացնելով կամ ամրացնելով նստատեղերը նվազեցնելու համար զբաղվածությունը, հատակին տեղադրել նշաններ՝ ապահովելու հեռավորությունը և դասավորելու նստելն այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Պատնեշների կիրառությունը խրախուսվում է հետագայում վարակի տարածումը կանխելու համար, սակայն չպետք է դիտարկվի որպես զբաղվածության նվազեցմանը կամ ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Հնարավորության դեպքում պետք է ստեղծվեն բացօթյա ընդմիջման տարածքներ և դրանք պետք է ապահովվեն ստվերային ծածկերով և նստատեղերով, որոնք հնարավորություն կտան մյուս անձանցից մշտապես պահպանել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Աշխատակիցներին նաև տրամադրվում են ձեռնոցներ այն հանձնարարությունների համար, որոնց դեպքում պահանջվում է դիպչել հաճախակի հպման մակերեսներին կամ ախտանշանների ստուգում կատարելու համար:
- ❑ Ցանկալի է օգտագործել պլեքսիգլաս բաժանարարներ այն տարածքներում, որտեղ աշխատակիցները պետք է շփվեն հաճախորդների հետ, օրինակ՝ վճարման խցիկներում կամ տեղեկատվական կենտրոններում:
- ❑ Տոմսերի կամ տեղեկատվության խցիկների նման տարածքներում աշխատակիցների աշխատակայանները առանձնացված են առնվազն 6 ոտնաչափով և ընդհանուր տարածքները վերափոխված են այնպես, որ ապահովում են առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Աշխատակիցներին հանձնարարվել է պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն այցելուներից և միմյանցից թանգարանի կամ պատկերասրահի բոլոր տարածքներում: Աշխատակիցները կարող են մի պահ մոտենալ, երբ անհրաժեշտ է ստանալ վճարում կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- ❑ Ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.
  - Ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
  - Պետքարաններ \_\_\_\_\_
  - Այլ \_\_\_\_\_
- ❑ Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ \_\_\_\_\_
- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ \_\_\_\_\_
- ❑ **Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ ունենալ ձեռքերը լվանալու համար:**
- ❑ Յուրաքանչյուր աշխատակցի բաժանվել է այս արձանագրության պատճեն:

- ❑ Յուրաքանչյուր աշխատողին հատկացվում է իր սեփական գործիքները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Աշխատակիցներին հանձնարարվել է հնարավորության դեպքում խուսափել հեռախոսների, պլանշետների, երկկողմանի ռադիոընդունիչների, այլ աշխատանքային պարագաների համատեղ օգտագործումից: Նրանց նաև հանձնարարվել է երբեք համատեղ չօգտագործել անհատական պաշտպանիչ միջոցները:
- ❑ Երբ պարագաներն անհրաժեշտ է օգտագործել համատեղ, դրանք ախտահանվում են տվյալ մակերեսին համապատասխան մաքրող միջոցով հերթափոխների միջև կամ ամեն օգտագործումից հետո՝ կախված նրանից, թե որն է ավելի հաճախակի տեղի ունենում, այդ թվում՝ համատեղ օգտագործվող գրասենյակային տեխնիկա, ինչպիսին է պատճենահանող սարքը, ֆաքսը, տպիչ սարքերը, հեռախոսները, ստեղնաշարեր, տերմինալներ, բանկոմատների PIN մուտքագրելու համար նախատեսված կոճակներ, կարիչներ, կարիչ հեռացնող սարքեր, նամակ բացող սարքեր, ընդունարանի տարածքներում մակերեսները, համատեղ օգտագործվող աշխատակայանները, լսողական և տեսողական սարքավորումները (խոսափողներ, խոսափողների տակդիրներ, միքսեր վահանակներ, հեռուստամոնիտորներ), շարժական ռադիոընդունիչները և այլն:
- ❑ Հերթափոխների ընթացքում աշխատակիցներին տրվում է ժամանակ մաքրման աշխատանքներ կատարելու համար: Մաքրման հանձնարարություններ տրվում են աշխատանքային ժամերին՝ որպես աշխատողների աշխատանքային պարտականությունների մի մաս: Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ ապահովելու աշխատանքային տարածքների կանոնավոր ու մանրակրկիտ մաքրում, ինչպես հարկն է: Անհրաժեշտության դեպքում նախաձեռնվում է երրորդ կողմի՝ մաքրման ծառայություններ տրամադրող ընկերությունների ներգրավում՝ օգնելու մաքրման ավելի մեծ պահանջի համատեքստում:
- ❑ Այս ստուգաթերթիկում նկարագրված բոլոր կանոնադրությունները, բացի նրանցից, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են գտնվել տվյալ տարածքում որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի – Նկարագրել այլ միջոցառումներ.

**B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- ❑ Թանգարանների, պատկերասրահների, բուսաբանական այգիների բացօթյա հատվածները և կենդանաբանական այգիների, ակվարիումների բացօթյա հաստատությունները և այլ նմանատիպ ցուցադրության տարածքները սահմանափակված են դրսի տարածքի 50% տարողությամբ:
- ❑ Հաստատության մուտքը սահմանափակվել է՝ ապահովելու այցելուների կողմից առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, և նախաձեռնվել են տարբերակներ, ինչպիսիք են՝ մուտքի համար սահմանված ժամանակով տոմսեր սոցիալական հեռավորություն ապահովելու համար: Խմբերը սահմանափակված են նույն տանն ապրող անձանցից կազմված խմբերով:

- ❑ Այն շրջագայությունները, որոնք համատեղում են տարբեր ընտանիքների անհատների, դադարեցվել են և զբոսավարները պահպանում են առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն զբոսաշրջության խմբից:
- ❑ Սոցիալական հեռավորությունը պահպանվում է բոլոր ցուցադրությունների վայրերում՝ նշաններով, որոնք տեղադրված են ցուցանակների մոտ՝ ցույց տալու, թե որտեղ պետք է այցելուները կանգնեն ցուցադրությունը տեսնելու համար: Հնարավորության դեպքում ցուցադրությունների, պատկերասրահների, դիտելու վայրերի և աշխատակիցների աշխատավայրերի համար ստեղծվում են մուտքի և ելքի առանձին ճանապարհներ՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորություն և նվազեցնելու այն դեպքերը, երբ մարդիկ անցնում են իրար կողքով մոտ տարածության վրա: Միակողմանի ուղղորդված քայլուղիներ, անցուղիներ (և այլն) են ստեղծվել քայլելով տեղաշարժվողների համար՝ նվազագույնի հասցնելու հաստատություններում մարդկանց խաչմերուկ տեղաշարժը:
- ❑ Ավելի փոքր ցուցադրության վայրերում այցելուների քանակը սահմանափակվել է միայն մեկ այցելուով՝ շարունակելու պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն անհատների կամ ընտանիքի անդամների միջև: Անհրաժեշտ է մշտադիտարկել այս տարածքների բոլոր մուտքերը տարածք մուտք գործող այցելուների քանակը վերահսկելու համար:
- ❑ Կտորե դիմակ կրող աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե մեկից ավելի մուտք կա) կանգնում է ցուցադրության տարածքի մուտքի մոտ՝ ամենամոտ գտնվող այցելուից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ հետևելու տարածքի տարողությանը և ուղղորդելու այցելուներին շարք կանգնել վեց ոտնաչափ հեռավորության վրա, եթե տարածքը հասել է տարողության իր սահմանափակմանը:
- ❑ Աշխատակիցներին և այցելուներին չի խրախուսվում հավաքվել բարձր երթևեկության տարածքներում, ինչպիսիք են սանհանգույցներն ու միջանցքները:
- ❑ Վերակազմակերպեք նստելու համար տարածքները և/կամ հեռացրեք նստատեղերը՝ հնարավոր դարձնելու հաճախորդների/այցելուների միջև առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունը: Համատեղ օգտագործվող/անշարժ նստատեղերի (նստարաններ և այլն) մոտ տեղադրեք ցուցանակ՝ հիշեցնելու հաճախորդներին/այցելուներին պահպանել ֆիզիկական հեռավորություն մյուսներից իրենց խմբից դուրս:
- ❑ Կենդանի ցուցադրությունների, կենդանիների ցուցադրությունների և այլնի համար օգտագործվող տարածքները վերափոխվել են՝ հնարավոր դարձնելու ֆիզիկական հեռավորության պահպանումը ընտանիքների խմբերի միջև: Հաշվի առեք ցուցադրությունների համար նախապես տեղեր պատվիրել և աշխատակիցներին հանձնարարել ուղղորդել ընտանիքներին պատշաճ դիտման տարածքներ:
- ❑ Հնարավորության դեպքում և հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ ունեցած պարտավորությունների համաձայն՝ հաստատությունները սահմանափակում են փոխադրման ծառայություններ: Տարածքում տեղափոխվելիս աշխատակիցները խուսափում են մեքենաների համատեղ օգտագործումից: Դիմակ կրելը պարտադիր է, երբ աշխատակիցները կամ հաճախորդները/այցելուները պետք է տեղափոխվեն միասին:
- ❑ Նույն ընտանիքի կամ տան անդամների դեպքում միմյանցից 6 ոտնաչափ հեռավորություն պահելու անհրաժեշտություն չկա:
- ❑ Քայլուղիներին ու հետիոտնի ուղիներին տեղադրվել են ցուցանակներ կամ նշաններ՝





Երթևեկության միակողմանի հոսք ստեղծելու համար:

- Նստելու համար նախատեսված հանրային տարածքները վերափոխվել են՝ խրախուսելու հաճախորդների և այցելուների միջև ֆիզիկական հեռավորությունը:
- Հատուկ կամ մասնավոր միջոցառումներ չեն թույլատրվում:
- Աշխատակիցների պետքարանները հասանելի չեն հաճախորդների օգտագործման համար:
- Փակ տարածքների** խաղահրապարակները, մագլցելու կառույցները և խաղային տարածքները մնում են փակ:

**C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- HVAC համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. առավելագույն հնարավորության չափով ավելացվել է օդափոխությունը: Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքեր, արդիականացնել շինության օդային գոտիները, փոխարինելով դրանք հնարավոր ամենաբարձր արդյունավետության գոտիներով, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ՝ դրսի օդի և օդափոխության քանակը գրասենյակներում և այլ տարածքներում ավելացնելու համար:
  - Տեղադրված են անհպում վճարային համակարգեր, իսկ անհնարինության դեպքում, վճարային համակարգերը պարբերաբար ախտահանվում են: Նկարագրել.
- 
- Ընդհանուր տարածքները և հաճախակի օգտագործվող առարկաները (օրինակ՝ սեղանները, դռան բռնակները, վարկային քարտ կարդացող սարքերը, լույսի անջատիչները, բազրիքները, ճաղավանդակները, ինտերակտիվ ցուցանմուշները և այլն) ախտահանվում են ամեն ժամ աշխատանքային ժամերին՝ Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչներով և հետևելով արտադրողի՝ օգտագործման ցուցումներին: Օպերատորները նույնականացնում և ախտահանում են մակերեսները, որոնց, հավանական է, որ երեխաները դիպչեն, օրինակ՝ պատուհանների հատվածներ, ցուցադրված նմուշներ կամ գետնին մոտ գտնվող սյուները:
  - Ցուցադրությունների աշխատանքը պահպանելու նպատակով աշխատակիցների կամ հանրության կողմից օգտագործվող կամ զբաղեցվող բացօթյա և ներսի տարածքները ամենօրյա ռեժիմով մանրակրկիտ մաքրվում են: Այս ցանկում պետք է ներառվեն բարձր երթևեկության տարածքները և համատեղ օգտագործվող աշխատանքային տարածքները (գրասենյակներ, հանդիպման սենյակներ, ընդմիջման սենյակներ և այլն) և մուտքի և ելքի տարածքները (բազրիքներ, աստիճանահարթակներ, վերելակի կառավարման կոճակներ և այլն):
  - Այցելուները խրախուսվում են նախապես վճարել մուտքի վճարն առցանց: Հնարավորության դեպքում տոմսերը թվային են՝ QR կոդով՝ հնարավոր դարձնելու առանց թղթի և անհպում համակարգերը:
  - Հնարավորության սահմանում թանգարանների այցելուները գրանցվում են այցելուների մատյանում, որը ներառում է այցելուի անունը, հեռախոսի համարը և էլեկտրոնային հասցեն, ինչը կարող է նաև արվել տոմսերը գնելու կամ գրանցվելու ժամանակ:

- ❑ Ամբողջ հաստատությունը մաքրվում է առնվազն ամենօրյա ռեժիմով, իսկ պետքարաններն ու հաճախակի օգտագործվող մակերեսները/օբյեկտները մաքրվում են ավելի հաճախ՝ կախված օգտագործման հաճախակիությունից: Դրսի՝ պլաստմասե կամ մետաղյա մակերեսները նույնպես մաքրվում են: Մի ցողեք ախտահանող միջոցներ փայտե մակերեսների կամ մայթերի վրա:
  - ❑ Հանրային պետքարաններն ախտահանվում են պարբերաբար ամեն ժամ՝ Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչներով՝ հետևյալ ժամանակացույցով.
- 
- ❑ Ախտանիշների ստուգումը կատարվում է նախքան այցելուների հաստատություն մտնելը: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել անձամբ կամ այլընտրանքային մեթոդներով, ինչպիսին է առցանց գրանցման համակարգերը կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված [ցուցանակը](#), որը կզգուշացնի, որ այս ախտանշաններով այցելուները չպետք է մտնեն այդ տարածք:
  - ❑ Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցնում են հաստատության ներսում կամ տարածքում գտնվելիս մշտապես կրել դիմակ (բացի ուտելիս և խմելիս, եթե կիրառելի է): Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան ու ավելի բարձր տարիքի երեխաներին: Դիմակ կարող են չկրել միայն այն անհատները, ովքեր բժշկից ստացել են դիմակ չկրելու ցուցում: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունը խթանելու համար առանց դիմակ ժամանող այցելուներին պետք է տրամադրվեն դիմակներ:
  - ❑ Երեխաների հետ հաստատություն ժամանող այցելուները պետք է ապահովեն, որ երեխաները մնան ծնողների մոտ, խուսափեն որևէ այլ մարդու կամ իրենց չպատկանող իրի դիպչելուց, և կրեն դիմակ, եթե տարիքը համապատասխանում է:
  - ❑ Պատկերասրահի բազմակի օգտագործման ուղեցույցները հեռացվել են և փոխարինվել մեկանգամյա օգտագործման քարտեզներով և ուղեցույցներով, նշաններով կամ լսողական ուղեցույցներով, որոնք հասանելի են անձնական էլեկտրոնային սարքերով:
  - ❑ Հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ հաստատության ունեցած պարտավորություններին համահունչ չափով դադարեցվում է հաճախորդներին/այցելուներին լսողական ականջակալների և այլ սարքավորումների տրամադրումը, եթե դրանք մանրակրկիտ չեն ախտահանվում ամեն օգտագործումից հետո: Խորհրդակցեք սարքավորումների արտադրողների հետ՝ որոշելու ախտահանման համապատասխան քայլերը, մասնավորապես՝ փափուկ, ծակոտկեն մակերեսների համար, ինչպիսին են ծակոտկեն փափուկ ականջակալները:
  - ❑ Ձեռքի ախտահանիչները, անձեռոցիկները և աղբամանները հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ դրա մոտակայքում:
  - ❑ Մանիտարական հարմարությունները աշխատակիցների և հյուրերի համար շարունակում են գործել և լինել առկա պահեստավորված, և լրացուցիչ օձառ, թղթե սրբիչներ ու ձեռքի ախտահանիչներ տրամադրվում են ըստ անհրաժեշտության:

- Ինտերակտիվ ցուցադրությունները, որտեղ հաճախորդները կամ այցելուները կարող են հավաքվել, մնում են փակ:
- Բոլոր խաղահրապարակները, ցատկելու համար նախատեսված կառույցները, կցված փչվող խաղային ամրոցները (և այլն) փակ են՝ ըստ նահանգի ուղեցույցների, քանի որ այս տարածքները խթանում են մարդկանց հավաքներ և դժվար են պատշաճ ախտահանվում:
- Կենդանաբանական այգիներում և ակվարիումներում կենդանիներին դիպչելու հնարավորություն տվող տարածքները փակ են, քանի որ այս տարածքները խթանում են մարդկանց հավաքներ, և դժվար են պատշաճ ախտահանվում:
- Հավաքներն ու միջոցառումները, այդ թվում՝ ծննդյան խնջույքներ չեն թույլատրվում:
- Լեզեռներների և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը նվազագույնի հասցնելու համար ձեռնարկեք քայլեր՝ ապահովելու, որ ջրային համակարգերը և դրանց հետ կապված ամեն ինչ անվտանգ են օգտագործման համար՝ հաստատության երկար ժամանակ փակ լինելուց հետո:

**Ֆիլմարտադրություն**

- Ֆիլմի նկարահանում կարող է թույլատրվել տեղում՝ հանրությանն այլապես անհասանելի մշակույթային բովանդակությունը հասանելի դարձնելու համար:
- Ֆիլմի նկարահանումները պետք է սահմանափակվեն 10 կամ ավելի քիչ անձանցով, ներառյալ դերասանական կազմի և անձնակազմի անդամների: Այն ֆիլմերի նկարահանումը, որի համար պահանջվում է 10-ից ավելի մարդկանց անձնակազմ, կամ որն ընդգրկում է տեսախցիկի մոտ միաժամանակ երկու անձ առանց դիմակի, կամ երգել կամ փողային գործիքներ նվագել, պետք է համապատասխանի Երաժշտության, Հեռուստատեսության և Ֆիլմարտադրության Վերաբացման Արձանագրություն. Հավելված Զ-ին և կարող է անցկացվել միայն բացօթյա:
- Դերասանական կազմն ու անձնակազմի անդամները պետք է ստուգվեն մինչ ֆիլմարտադրությունը մասնակցելը: Ստուգումը պետք է ներառի հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը տվյալ շփվել է COVID-19-ով վարակված անձի հետ վերջին 14 օրվա ընթացքում: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Ցանկալի է, որ բոլոր ֆիլմերի նկարահանումները տեղի ունենան բացօթյա՝ որքան դա հնարավոր է: Այն ֆիլմարտադրությունը, որն ընդգրկում է 10-ից ավելի աշխատողներ, պետք է կատարվի բացօթյա տարածքում:
- Դերասանական կազմի անդամներն ու աշխատակիցները պետք է կրեն դիմակներ և պահպանեն առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն՝ որքան դա հնարավոր է: Տեսախցիկի առջև առանց դիմակ հայտնվելը պետք է սահմանափակվի 1 անձով և ֆիլմարտադրությունը չպետք է ներառի փողային գործիքներ նվագելը կամ երգելը: Եթե տեսախցիկի առջև մեկից ավելի անձ պետք է լինի, բոլորը պետք է դիմակ կրեն:
- Հանդիսատեսի ներկայություն չի թույլատրվում:
- Ընտրովի – Նկարագրել այլ միջոցառումներ (օրինակ՝ միայն մեծահասակների համար ժամեր



նշանակելը):

**D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Այս արձանագրության պատճենն փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Մուտքի մոտ նշանը ծանուցում է հաճախորդներին տարողության սահմանափակումների վերաբերյալ:
- Մուտքերի մոտ, սպասասրահներում և բացօթյա պատկերասրահում ու թանգարանի տարածքում ցուցադրված են նշաններ՝ հիշեցնելու այցելուներին այն կանոնների մասին, որոնք անհրաժեշտ է պահպանել՝ ներս մտնելու համար: Այս կանոնները կարող են ներառել ցուցումներ ձեռքի ախտահանիչ միջոց օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև այցելության ժամանակ դիմակ կրելու, աշխատակիցներից և այլ հյուրերից/խմբերից ֆիզիկական հեռավորություն պահպանելու՝ առանց անհրաժեշտության մակերեսներին չդիպչելու անհրաժեշտության վերաբերյալ և, որ շենքի տարածքում ուտելը և/կամ խմելն արգելվում է: Հնարավորության դեպքում կանոնները հասանելի են թվային տարբերակով և ընդգրկում են պատկերագրեր:
- Տեղադրված են նշաններ, որոնք այցելուներին հրահանգում են, որ նրանք պետք է տանը մնան, եթե հիվանդ են շնչառական ախտանիշներով:
- Հաստատության առցանց հարթակները (վեբկայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) տրամադրում են հստակ տեղեկություններ հաստատության ժամերի վերաբերյալ, դեմքի ծածկոցների կիրառման անհրաժեշտության, սահմանափակ տարողության, տոմսերի, մուտքի, նախապես պատվիրելու, վերցնելու և/կամ առաքման ու այլ համապատասխան հարցերի վերաբերյալ:

**E. ԽԻՄՍ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Հաճախորդների համար խիստ կարևոր նշանակություն ունեցող ծառայություններին առաջնահերթություն է տրված:
- Հնարավորության դեպքում խոցելի անձանց համար ստեղծվել են հարմարություններ՝ հնարավոր դարձնելով նրանց հասանելիությունը ծառայություններին (օրինակ՝ ժամեր նշանակված միայն տարեցներին սպասարկելու համար):
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են առցանց:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժունակության սահմանափակումներ և/կամ բարձր վտանգի տակ գտնվող հաճախորդների համար հանրային վայրերում ապահովվի ծառայությունների հասանելիությունը:

**Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված վերևում, պետք է նշվեն առանձին էջի վրա, որն էլ բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:**

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցերի դեպքում, դուք կարող եք դիմել հետևյալ անձին.



Բիզնեսի  
կոնտակտային անձի  
անունը.  
Հեռախոսահամարը.  
Վերջին վերանայման  
ամսաթիվը.

---

---

---